ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
գ. Գայ , Ա. Խաչատրյան-1

01 սեպտեմբերի 2024

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի՝ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ աշակերտներ, ուսանողներ, հարգարժա՛ն ուսուցիչներ և դասախոսներ, կրթական ոլորտի պատասխանատուներ, ծնողներ,
Շնորհավորում եմ սեպտեմբերի 1-ի՝ Գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ:
Սիրելի՛ աշակերտներ և ուսանողներ, յուրաքանչյուր պետության գլխավոր ներուժը խելացի և կրթված հասարակությունն է: Դուք պետք է գիտակցեք, որ գիտելիքը ձեր ապագան է, ճանապարհը դեպի մեծ կյանք: Այն ձեզ հնարավորություն կտա գտնել ձեր տեղը ժամանակակից աշխարհում, դառնալ ձեր երկրի,համայնքի արժանավոր քաղաքացիներ:
Կանաչ ճանապարհ եմ մաղթում նոր ուսումնական տարում առաջին դասարան հաճախող մեր երեխաներին և այն երիտասարդներին, ովքեր ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ:
Ձեզ հետաքրքիր իրադարձություններով լի ու կարևոր տարիներ են սպասվում: Բոլոր ժամանակներում գիտելիքն ու կրթությունն են եղել այն հիմնական հենասյուները, որոնցով մարդը կարողացել է հաղթահարել ամենատարբեր մարտահրավերներն ու խնդիրները:
Հարգարժա՜ն ուսուցիչներ և դասախոսներ, յուրաքանչյուր ուսումնական տարի մի նոր մարտահրավեր է ձեզ համար, նոր սերունդներ կրթելու ձեր բարդ ու պատասխանատու աշխատանքի ճանապարհին: Ձեր ուսերին են դրված ոչ միայն աշխատանքային կամ մասնագիտական պարտականությունները, այլև սերունդներին որակյալ կրթություն տալու շնորհիվ գիտակից և արժանապատիվ քաղաքացի ձևավորելու պատասխանատվությունը:
Մեր երախտագիտությունն ենք հայտնում ձեզ՝ ձեր կատարած աշխատանքի համար և մաղթում քաջառողջություն, համբերություն և երկար ու խաղաղ աշխատանքային տարիներ:
Սիրելի՛ հայրենակիցներ, մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիս Գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱՋԱՐՅԱՆ